



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԹԻՎ 04Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի՝ 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 04Լ որոշման հավելվածի (այսուհետ՝ Կարգ) 1-ին կետի 1.1. ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Ուսումնական հարցերի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմված է յոթ անդամից, որոնցից հինգը՝ դատավոր անդամներ, երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Հանձնաժողովի նախագահի ընտրությունը, լիազորությունների դադարումը և դադարեցումն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասով և 77.1-րդ հոդվածով սահմանված կարգով: Հանձնաժողովի անդամների ընտրությունը, լիազորությունների դադարումը և դադարեցումն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ և 77.1-րդ հոդվածներով սահմանված կարգով»:

2. Կարգի 1-ին կետը լրացնել 1.1.1. ենթակետով.

«1.1.1. Հանձնաժողովի նախագահը ընտրվում և Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

3. Կարգի 2-րդ կետի 2.2. ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի և 104-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որակավորման գրավոր քննության աշխատանքների գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար գրավոր քննություն անցկացնելուց ոչ շուրջ, քան չորս օր առաջ Հանձնաժողովը Բարձրագույն դատական խորհրդին է առաջարկում գործունեությունը գնահատված լինելու դեպքում գնահատման վերջին արդյունքներով բարձր կամ լավ գնահատական ստացած յուրաքանչյուր մասնագիտացման փաստը դատավորի թեկնածություն՝ նրանց համաձայնությամբ»:

4. Կարգի 2-րդ կետը լրացնել 2.2.1. ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.2.1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ որակավորման գրավոր քննության աշխատանքների արդյունքների համապատասխան մասնագիտացմամբ բողոքարկման հանձնաժողով ձևավորելու համար փվյալ մասնագիտացմամբ քննության արդյունքների դեմ առաջին բողոքն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը Բարձրագույն դատական խորհրդին է առաջարկում գործունեությունը գնահատված լինելու դեպքում գնահատման վերջին արդյունքներով բարձր կամ լավ գնահատական ստացած և գնահատման հանձնաժողովի անդամ չհանդիսացող փվյալ մասնագիտացման հինգ դատավորի թեկնածություն՝ նրանց համաձայնությամբ»:

5. Կարգի 2.16-րդ կետի ա) ենթակետում «հաշվետվություն» բառը փոխարինել «տեղեկատվություն» բառով:

6. Կարգի 3.2. կետում «վայրը» բառից հետո ավելացնել «, եղանակը (առկա կամ հեռավար)» բառերը:

7. Հաստատել Հանձնաժողովի պաշտոնական գրության ձևաթուղթը՝ համաձայն Հավելվածի:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվելու պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

07 մայիսի 2021թ.
ք.Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
դատավորների ընդհանուր ժողովի
2021 թվականի մայիսի 07 № 02 որոշման

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
դատավորների ընդհանուր ժողովի
2018 թվականի նոյեմբերի 8-ի № 04Լ
որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

փոստային ինդեքս, հասցե, հեռախոս, այլ կապի միջոց

№ _____

« _____ » _____ թ.